

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՐԻ ԱՍԲԻՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ



ԳՈՐԾՈՒՆ ԶՂԶԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ ԶՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԶԱՏԵԼՈՒ ՈՐՈՇ ԶԱՐՑԵՐ *

ՀՏԴ 343.8

DOI: 10.52063/25792652-2023.1.16-211

ՇՈՒԻՆԱՆ ՀՈՂԱԲԱՇՅԱՆ

Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
մագիստրատուրայի 2-րդ կուրսի մագիստրանտ,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

hodabashyanshushan@mail.ru

ORCID: 0009-0006-0502-6682

Հոդվածի հիմնական նպատակը գործուն գղջալու ինստիտուտի որոշ կառուցակարգերի վերլուծությունն է և գործող օրենսդրությունից տարբերվող առաջարկների ներկայացումը: Նպատակի իրականացման համար դրվել են հետևյալ ընդհանուր խնդիրները. խնդրո առարկայի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները, առաջին անգամ հանցանք գործած լինելու պայմանը, կիրառման հայեցողական բնույթը:

Հոդվածում օգտագործվել են ընդհանուր գիտական և իրավագիտական մի շարք մեթոդներ, որոնք ներառում են համեմատական վերլուծությունը, օրենսդրական դաշտի վերլուծությունը, ինստիտուցիոնալ վերլուծությունը և այլն:

Հոդվածում առաջարկվում է հրաժարվել գործուն գղջալու ինստիտուտի հայեցողական լիազորությունից և այն դիտել որպես քրեական պատասխանատվությունից ազատելու իմպերատիվ լիազորություն: Սույն հոդվածում վերլուծության է ենթարկվել գործուն գղջալու ինստիտուտի սկզբնական նպատակը՝ պատմական ակունքների համատեքստում, քննարկվել են գործուն գղջալու ինստիտուտի սուբյեկտիվ և օբյեկտիվ պայմաններից որոշները՝ անկեղծ գղջալը, հանցանքի կատարումը որպես առաջին անգամ գնահատելու չափորոշիչները, իդեալական և ռեալ համակցության պարագայում ինստիտուտի կիրառելիության հնարավոր լուծումները, հանցանք հասկացության նյութական և քրեադատավարական ասպեկտները քննարկվող ինստիտուտի համատեքստում, խրախուսական նորմերի կապը գործուն գղջալու ինստիտուտի հետ, նախկին և գործող քրեական և քրեադատավարական օրենսդրությունների համապատասխան իրավանորմերի փոփոխությունները, նմանություններն ու տարբերությունները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում գործուն գղջալու

* Հոդվածը ներկայացվել է 31.01.2023թ., գրախոսվել՝ 01.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

ինստիտուտի գործարկման տեսական և գործնական հավասարակշռության հնարավոր տարբերակները:

Հիմնաբառեր՝ գործուն գոջալ, քրեական պատասխանատվությունից ազատել, հայեցողական լիազորություն, մեղայականով ներկայանալ, առաջին անգամ հանցանք կատարել, ռեալ համակցություն, իդեալական համակցություն, խրախուսական նորմ, հանցանք, արարք:

Նախաբան

«-Աղամ, արդյո՞ք այն ծառից, որից քեզ պատվիրել էի չլուտել, կերել ես:

-Այն կինը, որ ինձ հետ լինելու տվեցիր, նա՞ տվեց ինձ այդ ծառից, և ես կերա:

-Եվա՞, այդ ինչ ես արել:

-Օձն ինձ խաբեց, և ես կերա» (Ծննդոց 3:11-13):

Տեղի ունեցավ մարդկության պատմության առաջին դատաստանը, երբ առաջին մարդը մեղանչեց, չգոջաց և վտարվեց դրախտից: Այդուհետ ձևավորված երկրային դատաստանի հիմքերը դրվեցին՝ ակունքում ունենալով երկնային դատաստանի օրինակը, որտեղ անկեղծորեն գոջալու և ապաշխարելու գաղափարն անկյունաքարային է պատժի և պատասխանատվության ենթարկվելու համատեքստում ներման արժանանալու, վերափոխվելու և վերստին կյանք ստանալու համար: Զրիստոնյա ազգի համար որպես բարոյական արժեքների իդեալ չի կարող լինել այլ ակունք բացի Սուրբ գրքից, իսկ օրենքները ոչ այլ ինչ են, քան բարոյական նորմեր՝ բարձրացված օրենսդրական մակարդակի:

Գործուն գոջալու ինստիտուտի նախատիպը հանդիպում ենք Հին կտակարանի Առակաց գրքում, որտեղ ասվում է. «Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չի գտներ, բայց զանոնք խոստովանողն ու մեկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ» (Գիրք Առակաց 28:13):

Հիշատակումներ կան նաև բարոյականության և օրենքի փոխհարաբերության մասին վկայող Մխիթար Գոշի «Դատաստանագրքում», ըստ որի՝ (...) խրատում էր ճանապարհին հաշտվել ոսոխի հետ, այդպիսով՝ դատավորի կողմից դատաստանի չենթարկվել: Նույն բանն արտահայտեց նաև տնտեսի առակում, որ թեպետ սկզբում անիրավ էր, սակայն հետո գովելի էր իր գոջմամբ, որով չմտավ դատաստանի ատյան, այլ փոխարենը հաշիվ տվեց (Գոշ Գլուխ 5):

Ուշագրավ է, որ դեռևս 12-րդ դարի վերջում կազմված այս իրավական հուշարձանում տեղ գտած՝ գործուն գոջալու և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավական նորմին համօրինակ վերոնշյալ նորմը գործող օրենսդրությամբ աննշան փոփոխությունների է ենթարկվել: Այսպես.

1. *Ճանապարհին հաշտվել ոսոխի հետ*, որ նույնն է, թե տուժողի հետ հաշտվել, *որպեսզի բանը չհասնի դատաստանի*, այսինքն՝ անձն ազատվի քրեական պատասխանատվությունից:

2. *Թեպետ սկզբում անիրավ էր, սակայն հետո՝ գովելի էր իր գոջմամբ*, նույնն է, թե հանցանք կատարելուց հետո անկեղծորեն գոջալը, իրեն մեղսագրվող արարքը չվճարելը, *որի հիմքով էլ չի մտնում դատաստանի ատյան*, այսինքն՝ ազատվում է քրեական պատասխանատվությունից:

3. *Այլ փոխարենը հաշիվ տվեց*, որ նույնն է, թե հատուցել կամ հարթել հանցագործությամբ պատճառված վնասը:

Չղջումը՝ որպես ապաշխարության կարևորագույն նախապայման, ընկած է ամբողջ քրիստոնեական հավատքի հիմքում: Գործուն գոջալը նույնպես ասես թե ապաշխարություն է կատարված հանցանքի համար: Բայց եթե ապաշխարության

անկեղծորեն զղջմամբ Աստված մեղավորին ազատում է յուրաքանչյուր անգամ և ցանկացած տեսակի մեղքի պարագայում, ապա այս առումով գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու մարդկային օրենսդրությունը նախատեսել է հստակ չափորոշիչներ:

Փոփոխությունը

Գործուն զղջալը և մեղքի քավումը, որպես իրավաբանական ինստիտուցիոնալ հասկացություններ, այսօր նախատեսված են աշխարհի գրեթե բոլոր պետությունների քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով:

2003 թ. օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ նոր քրեական օրենսգրքում առաջին անգամ հայկական քրեական օրենսդրության պատմության մեջ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն տեսակ նախատեսվեց գործուն զղջալը, որը, ըստ էության, փոփոխության չի ենթարկվել նաև 2022 թվականի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքով:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, փոփոխությունն ընդամենը եզրութաբանական է, հստակեցվել է «եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել» ձևակերպումը, քանի որ նախկին՝ «առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած» ձևակերպումից հստակ չէր՝ առաջին անգամը վերաբերում է անձի կողմից ընդհանրապես հանցանք կատարելուն, թե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելուն:

Փոփոխության ենթարկված հաջորդ՝ «չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը» ձևակերպումը կարծես թե ավելացված նոր պայման է քննարկվող ինստիտուտի կիրառման համար: Ըստ նոր իրավակարգավորման՝ եթե անձը չի ընդունում մեղադրանքը, չի կարող գործուն զղջալու հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից (Մարգարյան և ուրիշներ 168-169): Չվիճարկել իրեն մեղսագրվող արարքը նշանակում է համաձայնվել մեղադրանքի ամբողջ ծավալի հետ՝ արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականի, ինչպես նաև պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրանքում առկա ենթադրության հետ (Ամիրխանյան Շ.-ի և Ֆարմանյան Գ.-ի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշում):

Բացի դրանից՝ գործուն զղջալու իրավանորմի տեքստում գործող օրենսդրության մեջ բացակայում է խրախուսական նորմերի վերաբերյալ հատվածը, ինչը կքննարկվի հաջորդ պարագրաֆում:

Առաջին անգամ հանցանք կատարած լինելու պայմանը

Նախկինում հանցանք չի կատարել:

ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործուն զղջալու ինստիտուտի առաջին օբյեկտիվ պայմանը անձի կողմից առաջին անգամ հանցանք կատարած լինելն է: Քրեաիրավական իմաստով անձը համարվում է առաջին անգամ հանցանք կատարած, եթե նախկինում հանցանք չի կատարել կամ կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է (ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

Քննարկվող պայմաններից առաջինը՝ նախկինում հանցանք կատարած չլինելը, ըստ էության, վարույթն իրականացնող մարմնին այլ հանցանքի կատարման մասին հայտնի չլինելն է: Հարց է առաջանում՝ կիրառելի՞ է արդյոք գործուն զղջալու ինստիտուտը հանցագործությունների համակցության պարագայում, երբ վարույթն իրականացնող մարմնին հայտնի է անձի կողմից կատարված մի քանի հանցագործություններ:

Հեղինակների մի խումբ կարծում է, թե հանցագործությունների համակցության դեպքում գործուն գոյալու ինստիտուտը կիրառելի չէ (Апюакин 26), մինչդեռ տրամագծորեն հակառակ դիրքորոշում ունեցող գիտնականների մեկ այլ խումբ կարծում է, որ անձի կողմից մի քանի հանցագործություն կատարելը ոչ միշտ է, որ կարող է խոչընդոտ հանդիսանալ քննարկվող ինստիտուտի կիրառման համար (Щерба 34): Մեկ այլ խմբի հեղինակների կարծիքով՝ եթե հանցագործությունների իդեալական համակցության դեպքում ինստիտուտը կիրառելի է, ապա իրական համակցության դեպքում կատարված հանցագործությունների միջև, որպես կանոն, առկա է որոշակի ժամանակահատված, ինչը հնարավորություն է տալիս հանցավորին՝ վերահսկելու իր գործողությունները և բարձրացնում է վերջինի հանրային վտանգավորությունը: Իդեալական համակցության դեպքում, որպես կանոն, անձն ի սկզբանե նպատակադրված է կատարել օրենքով արգելված միայն մեկ արարք, ինչը ևս վկայում է առավել նվազ հանրային վտանգավորության մասին (Քյարամյան և Երեմյան 22-23):

Նախ պետք է նշել, որ դժվար է միանշանակ պնդել, որ իդեալական համակցություն կազմող արարք կատարելու դեպքում անձի հանրային վտանգավորությունն ավելի նվազ է, քան ռեալ համակցություն կազմող արարքների դեպքում, քանի որ անձի և արարքի հանրային վտանգավորության գնահատումն առավելապես կախված է մեղքի ձևից, արարքի կատարման շարժառիթներից, նպատակից, կատարման ձևից, եղանակից, ժամանակից և մի շարք այլ գործոններից (Վճռաբեկ դատարանի 15. 08. 2014 թ. Վ.Մանասյանի վերաբերյալ գործով ԵՇԴ/0144/01/13 որոշում, 14-րդ կետ), որոնք կարող ենք կատարված մեկ արարքի պարագայում բարձրացնել, և հակառակը, երկու և ավելի արարքների դեպքում նվազեցնել անձի և արարքի հանրային վտանգավորությունը:

Եթե իդեալական համակցության դեպքում գործուն գոյալու ինստիտուտի կիրառելիությունը տարակարծությունների տեղիք չի տալիս, ապա նույնը չի կարելի ասել իրական համակցության պարագայում: Բերենք օրինակ.

X զորամասից հաղորդում է ստացվել, որ զորամասում վերադաս սպա Ա. Ա.-ն զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ վիրավորանք է հասցրել ստորադաս Բ. Բ.-ին, ինչից հետո մոտ 10 րոպե անց տեսնելով, որ վերջինս կրկին թերանում է զինվորական պարտականությունները կատարելու մեջ, բռնություն է գործադրել վերջինիս նկատմամբ:

Այսինքն, անձը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ և 524-րդ հոդվածներով նախատեսված հանցավոր արարքներ: Տվյալ դեպքում խոսքը ռեալ համակցության մասին է, որտեղ առաջին և երկրորդ հանցանքների միջև առկա ժամանակահատվածը մեծ չէ: Որպեսզի հասկանանք՝ հնարավոր է արդյոք նշված իրավիճակը դիտարկել որպես անձի կողմից առաջին անգամ հանցանքի կատարում, պետք է պատասխանել այն հարցին, թե ինչ ենք հասկանում հանցանք ասելով:

Նյութաիրավական իմաստով՝ հանցանքի հասկացությունը տալիս է ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ հանցանք է համարվում պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը (գործողությունը կամ անգործությունը): Այն, որ իդեալական համակցության դեպքում, թեև կատարված մեկ արարքն իր մեջ պարունակում է երկու կամ ավելի տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ, և այնուամենայնիվ տեսական և գործնական մակարդակում հնարավոր է համարվում գործուն գոյալու ինստիտուտի կիրառելիությունը, վկայում է այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված հանցանք հասկացությունը առավելապես քրեադատա-վարական իմաստ ունի:

Ըստ ընդունված սահմանման՝ դատավարական իմաստով արարքն առկա է, «երբ բազմաթիվ դեպքեր այնպես են միմյանց շաղկապված, որ դրանց առանձին

գնահատումը տարբեր վարույթներում կլինի մեկ միասնական իրադարձության անբնական մասնատում»:

Քրեական դատավարության առարկան կազմող այս իրադարձության, այն է՝ դատավարական արարքի ներքո պետք է հասկանալ այն մեկ միասնական պատմական դեպքը, որը տարբերվում է մյուս նման կամ միատեսակ դեպքերից, և որի շրջանակում մեղադրյալը ենթադրաբար իրականացրել է մեկ կամ մի քանի քրեական հանցանկազմ (Հովհաննիսյան 12):

Որպես կանոն, ռեալ համակցության դեպքում ընդունված է հասկանալ մի քանի դատավարական արարք, սակայն կարող են շեղումներ լինել, երբ նյութական իրավունքի նկատառումներով պետք է ելնել ռեալ համակցության առկայությունից, բայց տեղի ունեցածը, այնուամենայնիվ, հանդես է գալիս իբրև մեկ միասնական պատմական իրադարձություն, ուստի պիտի գնահատվի իբրև մեկ արարք դատավարական իմաստով (Հովհաննիսյան 15): Այսինքն, քննարկվող օրինակում, թեև վերադաս սպայի կողմից զինծառայողին վիրավորելու հանցանքը դրանից քիչ անց նոր ծագած դիտավորությամբ զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելու հանցանքի հետ գտնվում է ռեալ համակցության մեջ, սակայն առկա է միայն մեկ արարք դատավարական իմաստով:

Ավելին՝ քրեադատավարական օրենսդրությամբ քրեական վարույթ նախաձեռնելու առիթը առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասը պարզաբանում է, որ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է *այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն*, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: Մինևույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 7-րդ մասն արձանագրում է, որ նախաքննության ընթացքում այլ ենթադրյալ հանցանք կատարելու փաստի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքում նոր քրեական վարույթ է նախաձեռնվում: Մինչդեռ վերը բերված օրինակում, երբ գործմասից ստացվում է զինծառայողի կողմից ռեալ համակցություն կազմող հանցանքների մասին հաղորդում, այն, ըստ էության, դիտվում է որպես մեկ դեպք, մեկ դատավարական արարք, և այդ նկատառումից ելնելով էլ երկու տարբեր վարույթներ չեն նախաձեռնվում, այլ մեկ դեպքի առթիվ նախաձեռնվում է վարույթ, և արձանագրության մեջ նկարագրվում են անձի կողմից կատարված արարքի փաստական հանգամանքները:

Քննարկվող օրինակի պարագայում դժվար է ասել, թե անձն առաջին անգամ չէ հանցանք կատարել, քանի որ հանցավոր արարք կատարելու փորձառություն անձն առաջին անգամ է ունենում, և նրա կյանքում այդպիսի իրադարձությունն առաջինն է՝ անկախ նրանից, թե քրեաիրավական իմաստով քանի հանցագործության իրավական գնահատականի կհամապատասխանի դեպքը: Հետևաբար հանցանքը պետք է համարել առաջին անգամ կատարված ինչպես իդեալական համակցության, այնպես էլ ռեալ համակցության քննարկվող բացառությունը կազմող այն բոլոր դեպքերում, երբ կատարված արարքների միջև ընկած ժամանակահատվածը չկնիս է, արարքները կազմում են մեկ միասնական իրադարձություն, մեկ միասնական պատմական դեպք, կապված են ներքին միասնությամբ և նպատակային ուղղվածությամբ, և արարքների առանձին գնահատումը կդիտվի որպես մեկ իրադարձության անբնական մասնատում, ուստիև՝ ընդունելի համարել գործուն գոյալու ինստիտուտի կիրառելիությունը:

Կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է

Քննարկման ենթակա է նաև, թե արդյոք ռեալ համակցության դասական դեպքերում անձը պետք է համարվի նախկինում հանցանք կատարած, և արդյոք հանցանք կատարած անձը, որը քրեական պատասխանատվությունից ազատվել է, կամ որի դատվածությունը մարվել կամ վերացվել է, պետք է համարվի նախկինում հանցանք չկատարած անձ:

Այստեղ կարևոր է հասկանալ, թե օրենսդիրն ինչ գաղափար է դրել գործուն գղջալու ինստիտուտի հիմքում: Եթե առաջնային նպատակ է մղված անձ-պետություն հաշվարկային փոխհարաբերությունը, ապա հասկանալի է օրենսդրի այն մոտեցումը, որ նույնիսկ նախկինում հանցանք կատարած, սակայն քրեական պատասխանատվությունից ազատված կամ դատվածությունը մարված կամ վերացված անձը դիտվում է որպես առաջին անգամ հանցանք կատարած անձ: Սակայն եթե ինստիտուտի գաղափարական հենքը տեսնում ենք դրա ակունքներում և չենք արժեզրկում սուբյեկտիվ գործոնները և հենց այդ սուբյեկտիվ գործոնի՝ գղջալու և օբյեկտիվ մնացյալ պայմանների միաժամանակյա առկայությունն ենք հիմք ընդունում անձի համար որոշակի դրական հետևանքների առաջ գալու հնարավորությունը քննարկելու համար, ապա այս դեպքում տրամաբանակն չէ օրենսդրի այս մոտեցումը:

Այս հարցը տեսության մեջ և պրակտիկայում ևս տարակարծության տեղիք է տալիս. հեղինակների մի մասը կարծում է, որ նման դեպքերում գործուն գղջալու ինստիտուտի կիրառման առումով որևէ խոչընդոտ լինել չի կարող: Մինչդեռ երկրորդ խմբի ներկայացուցիչները կարծում են, թե նշված պայմաններում հիշյալ ինստիտուտի կիրառումն անթույլատրելի է, քանի որ անձը փաստացի առաջին անգամ չէ, որ հանցանք է կատարում, և նրա նկատմամբ նման հատուկ ներողամտությունն արդարացված չէ, և առաջարկում են օգտագործել ոչ թե «առաջին անգամ հանցանք կատարած», այլ՝ «առաջին անգամ հանցանքի կատարման մեջ մեղադրվող» դարձվածքը (Чернова 75), որը սույն հոդվածի տրամաբանության մեջ ավելի ընդունելի է:

Մրա հետ կապված պետք է նշել, որ առաջին անգամ հանցանք կատարած լինելու հասկացությունը ՀՀ քրեական օրենսգրքում քննարկվում է քրեական պատասխանատվությունից ազատելու, պատիժ նշանակելու, պատժից ազատելու ինստիտուտների համատեքստում: Բաց թողնելով առաջին անգամ հանցանք կատարած անձի՝ քրեական օրենսդրությամբ տրված ընդհանուր բնորոշման քննադատությունը, որն առանձին հետազոտության առարկա է, անհրաժեշտ է արձանագրել, որ վերոնշյալ դիրքորոշումը վերաբերում է գործուն գղջալու քննարկող ինստիտուտին: Այս իմաստով ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածում «առաջին անգամ հանցանք կատարած» հասկացության փոխարեն «առաջին անգամ հանցանքի կատարման մեջ մեղադրվող» դարձվածքը ներառելը կարող է ողջամիտ լուծում լինել առաջարկվող մոտեցման տրամաբանության մեջ՝ բացառելով կրկնահանցագործների գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը, որը, ի դեպ, կրիմիոլոգիական կատեգորիա է և իր բովանդակության մեջ ներառում է նաև այն անձանց, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով համարվում են առաջին անգամ հանցանք կատարած անձ:

Հետաքրքրական է, որ ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, որտեղ գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ իրավանորմում նշված էր, որ այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում, գործող քրեաիրավական օրենսդրությամբ այդպիսի ձևակերպում առկա չէ: Մինչդեռ օրենսգրքի Հատուկ մասում առկա են բազմաթիվ խրախուսական նորմեր, որոնք եթե նախկինում համարվում էին գործուն գղջալու ինստիտուտի մասնավոր դրսևորումներ, ապա նույնը չի կարելի ասել գործող իրավակարգավորումների պարագայում:

Գրականության մեջ միասնական կարծիք չկա, թե արդյոք խրախուսական բնույթի նորմերը գործուն գղջալու տարատեսակ են, թե իրենցից ինքնուրույն

ինստիտուտ են ներկայացնում: Որոշ հեղինակներ այն համարում են գործուն զղջալու ինստիտուտի բաղկացուցիչ մաս (Сабанин и др. 136), մյուսները համարում են, որ պատասխանատվությունից ազատելու հատուկ միջոցների և գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանները նույնական չեն (Papor 36): Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ գործող քրեաիրավական օրենսդրությունը հրաժարվել է նախկին ձևակերպումից, հիմք է տալիս եզրակացնելու, որ խրախուսական նորմերը չեն դիտվում որպես գործուն զղջալու ինստիտուտի մասնավոր դրսևորում: ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նախկինում գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից: Ստացվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անձը Հատուկ մասի համապատասխան խրախուսական նորմի հիմքով ազատվում է քրեական պատասխանատվությունից (Հատուկ մասի խրախուսական նորմերը, ի դեպ, իմպերատիվ բնույթ ունեն), դրանից հետո նա համարվելու է առաջին անգամ հանցանք կատարած անձ և կարող է գործուն զղջալու հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այս տեսանկյունից ավելի համոզիչ է այն մոտեցումը, որ անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից գործուն զղջալու հիմքով, եթե, ի թիվս օրենսդրի կողմից նշված մյուս պայմանների պահպանման, անձի կյանքում հանցավոր վարքագիծ դրսևորելու փորձառությունը *եզակի բնույթ է կրում*, կամ գոնե վարույթն իրականացնող մարմնին քննության տվյալ պահին հայտնի է անձի կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու *եզակի դեպք*: Այս տրամաբանությամբ կհստակեցվեն նաև պրակտիկայում ռեալ համակցություն կազմող արարքների պարագայում քննարկվող ինստիտուտի կիրառելիության ոչ միատեսակ մոտեցումները, երբ մի դեպքում իրավակիրառը հնարավոր չի համարում անձին քրեական պատասխանատվությունից ազատելը՝ պատճառաբանությամբ, որ անձը փաստացի առաջին անգամ չէ հանցանք կատարել, մեկ այլ դեպքում՝ կատարված արարքներից ժամանակագրական առումով առաջինը դիտվում է որպես անձի կողմից առաջին անգամ հանցանքի կատարում, այդ արարքի համար անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից գործուն զղջալու հիմքով, իսկ մյուս արարքի կատարման համար անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության:

Այս հիմնախնդիրը նաև առնչվում է անկեղծորեն զղջալու ինդրին: Եվ եթե անկեղծորեն զղջալը պետք է դիտենք որպես քննարկվող ինստիտուտի համար անկյունաքարային պայման, ապա հարց է առաջանում՝ քանի՞ անգամ անձը կարող է անկեղծորեն զղջալ: Առնվազն կասկածելի է այն անձի զղջումը, որ նախկինում հանցանք է կատարել և ազատվել է քրեական պատասխանատվությունից (ոչ գործուն զղջալու հիմքով, քանի որ այս հիմքով անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից միայն մեկ անգամ), կամ որի դատվածությունը հանվել կամ վերացվել է (պատկերացնենք, որ գործուն զղջալը այդ դեպքում դիտվել է որպես մեղմացուցիչ հանգամանք): Արդյոք սա չի վկայում անձի հակասոցիալական վարքագծի և հանցանք կատարելու հակվածություն ունենալու մասին: Ուստի, թեև գործնականում անհնար է ներթափանցել մարդու ներաշխարհ՝ ճշգրիտ պատկերացնելու անձի կողմից հանցագործություն կատարելուց հետո անկեղծորեն զղջալու հանգամանքը, քանի որ զղջումը մտում է բոլորի համար գաղտնի, մեղանչողը զղջա՞ց սրտով, թե՞ ոչ, արդարացա՞մ, թե՞ ոչ, մտում է իր խղճին և Աստծուն (Մելիք Թանգյան 854), այնուամենայնիվ, եթե հանցավոր միջադեպը անձի կյանքում եզակի (առաջին անգամ) բնույթ է կրում, պետք է առաջնորդվել անձի կողմից անկեղծորեն զղջալու կանխավարկածով, և հակառակը, եթե անձը նախկինում կատարել է հանցանք, անկախ նրանից՝ ազատվել է քրեական պատասխանատվությունից, մարվել կամ վերացվել է դատվածությունը, անձի զղջումը, ինչպես նաև օբյեկտիվ այլ

գործողությունների կատարումը պետք է դիտել միայն որպես պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու լիազորության հայեցողական բնույթը

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը որպես հայեցողական լիազորություն նախատեսել է միայն գործուն զղջալու կառուցակարգը, ի տարբերություն նախկին քրեադատավարական օրենսդրության, երբ հայեցողական լիազորությունն ընդգրկում էր նաև իրադրության փոփոխության (գործող օրենսդրությամբ նախատեսված չէ), ինչպես նաև տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով (այլևս իմպերատիվ լիազորություն է) քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտները:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հսկող դատախազն իրավասու է չհարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել քրեական հետապնդումը, եթե առկա են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր պայմանները, ըստ որի՝ եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Հայեցողական քրեական հետապնդման վերաբերյալ նորմի վերլուծությունից պարզ է, որ գործ ունենք *որոշման հայեցողության* հետ, այսինքն, եթե առկա է փաստակազմը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածում նշված պահանջները, ապա հսկող դատախազն իրավասու է կիրառել իրավական հետևանքը կամ չկիրառել այն (Ռուբել և Պողոսյան 205): Հայեցողական լիազորությունն օրենսդրական մի հնարք է, որի կիրառումն ապահովում է արդարության ավելի բարձր մակարդակ՝ անհատական գործերում (Szot 1): Այսինքն, բոլոր դեպքերում իրավասու մարմնի կամքին է թողնված՝ կիրառել իրավական հետևանքը, թե՛ ոչ: Օրինակ՝ կարող է գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվել անձը, որ նախկինում կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք, ազատվել քրեական պատասխանատվությունից, կամ դատվածությունն օրենքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է, այնուհետև կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք և գործուն զղջացել: Օրենքի տեսանկյունից ոչ մի սահմանափակում չկա:

Թեև լիազորությունը հայեցողական է, ինչը ենթադրում է յուրաքանչյուր գործով անհատական մոտեցում, այնուամենայնիվ իրավակիրառ պրակտիկայում մշակվում են որոշակի չափորոշիչներ, որոնց առկայության պայմաններում է միայն իրավասու մարմինը կայացնում համապատասխան որոշում: Այսինքն, կշռաքարը դրվում է ոչ թե անձի վարքագծի գնահատման վրա, այլ իրավասու մարմնի՝ իր համար ընդունելի արժեքների համատեքստում նշածողի սահմանման վրա, ինչը խիստ սուբյեկտիվ է: Այս դեպքում առաջնային է դառնում իրավասու մարմնի ներքին բարոյականության, ինչու չէ նաև հանցանք կատարած անձի հաջողության գործակցի գործոնը, ի վերջո քիչ չեն դեպքերը, երբ նույնական փաստերը և անձի վարքագիծը մի դեպքում դիտվում են բավարար քննարկվող ինստիտուտի կիրառության համար, մյուս դեպքում՝ ոչ, համանման հանգամանքներում մի պաշտոնատար անձը կարող է նպատակահարմար չհամարել անձին քրեական պատասխանատվությունից ազատելը, մյուսը՝ ընդհակառակը: Մյուս կողմից հարց է ծագում՝ եթե անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքում դրվում են խիստ որոշակի սուբյեկտիվ

և օբյեկտիվ պահանջներ, ապա ինչու պետք է վարույթն իրականացնող մարմինը սահմանափակված չլինի *կաշկանդված որոշմամբ*: Ի վերջո «Տեսությունն առանց պրակտիկայի մեռած է, պրակտիկան առանց տեսության՝ կոյր» (Սուվորով): Հետևաբար, եթե առկա է փաստակազմը, ապա իրավասու մարմինը պետք է կիրառի իրավական հետևանքը: Այս պարագայում իրավասու մարմինը պետք է ունենա միայն փաստակազմի առկայությունը գնահատելու լիազորություն (Ռուբել և Պետրոսյան 176): Ստացվում է, որ առաջին անգամ հանցանք կատարած (հիշենք, որ սույն հոդվածի տրամաբանությամբ պետք է հասկանալ հանցավոր վարքագիծ դրսևորելու փորձառության *եզակի բնույթը* կամ տվյալ պահին հայտնի հանցավոր վարքագիծ դրսևորելու *եզակի դեպքը*), անկեղծորեն զղջացած (հիշենք, որ սույն հոդվածի տրամաբանությամբ պետք է առաջնորդվել օբյեկտիվորեն առաջին անգամ հանցանք կատարած լինելու դեպքում զղջումը անկեղծորեն դիտելու կանխավարկածով) և առկա են գործուն զղջալու իրավանորմը, ապա իրավասու մարմինը իմպերատիվ կերպով պետք է կիրառի իրավական հետևանքը՝ անձին ազատի քրեական պատասխանատվությունից: Պետք է նշել, որ այս կերպ նաև կրավարարվի պետության ռեսուրսների խնայողության և վարույթն իրականացնող մարմինների ծանրաբեռնվածության բեռնաթափման ածանցյալ նպատակը, միևնույն ժամանակ՝ կկենսագործի նաև հանցագործությունների կանխման պրևենտիվ գործառույթը, քանի որ նախկինում հանցավոր վարքագիծ դրսևորած անձը չի կարող նախատրամադիր լինել ֆիկտիվ զղջման պարագայում քրեական պատասխանատվությունից ազատվելու հեռանկարով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ամիրխանյան Շողակաթի, Ֆարմանյան Գառնիկի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշում*:
2. Թանգյան Մելիք Ներսես Վարդապետ, *Հայոց եկեղեցական իրավունքը*, Թեհրան, 2004:
3. Հովհաննիսյան Գոռ, *Կրկին դատվելու արգելք*, «Ղատական իշխանություն» հանդես, ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ 2022 4-6 (274-276), առաջնային աղբյուրը՝ BGHSt 41, 385 (388); 43, 252 (255); BGH, wistra 2002, 154 (155); StV 2007, 286 (287):
4. Մարգարյան Աննա, Գաբուզյան Արա, Սիմոնյան Տիգրան, *ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց*:
5. Ռուբել Ռյուդիգեր, Պողոսյան Վարդան, *ՀՀ ընդհանուր վարչական իրավունք*: Եր., 2011:
6. *Վճռաբեկ դատարանի 15.08.2014թ. Վարդան Մանասյանի վերաբերյալ գործով ԵՇԴ/0144/01/13 որոշում*:
7. Զյարամյան Արզիշտի, Երեմյան Հայկ, *Գործուն զղջալու ինստիտուտի քրեաիրավական և քրեադատավարական վերլուծություն*, Օրինականություն հանդես, 2017, թիվ 101:
8. Алюшкин Павел, *Фактический состав освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием*, М., 1999.
9. Чернова Майя, *Деятельное раскаяние как институт освобождения от уголовной ответственности* (ст. 75 УК РФ) автореф. дис. ... канд. юрид. наук: Санкт-Петербург: СПб ЮИ ГП РФ, 2006.
10. *Уголовное право Российской Федерации, Особенная часть* Рагоз Алексей Иванович, Москва, 2004.
11. *Уголовное право. Часть Общая: учебное пособие: в 4 т.* / Сабанин Сергей, Погосян Татьяна и др.; отв. ред. Козаченко Иван; рец. Горобцов Владимир-Екатеринбург: УрГЮА, т.4: *Освобождение от уголовной ответственности и наказания: основания, виды и последствия*, 1995.

12. Щерба Сергей, Савкин Алексей, *Доказывание деятельного раскаяния подозреваемого (обвиняемого) на предварительном следствии. Методические рекомендации*. М.: ВНИИ МВД РФ, 1994

13. Szot Adam, *Discretionary Powers of the Public Administration in Law Application Processes and its Judicial Control*, URL: shorturl.at/pFVWY

WORKS CITED

1. Alushkin P. V. *Fakticheski sostav osvobajdeniya ot ugalovnoy otvetstvennosti v svyazi s deyatelnim raskayaniem*, M., 1999, [*The Actual Composition of the Exemption from Criminal Responsibility due to Active Repentance*, Moscow] (in Russian).

2. Vchrabek datarani Sh. Amirkhanyani, G. Farmanyani veraberyal tiv EKD/0209/01/10 voroshum [Court of Cassation decision EKD/0209/01/10 on the case of Sh. Amirkhanyan, G.Farmanyan] (in Armenian).

3. Tangyan Meliq N.V., *Hayoc ekexecakan iravunq*, Tehran, 2004 [*Armenian Ecclesiastical Law*, Tehran] (in Armanian).

4. Hovhannisyanyan G., *Krkin datvelu argelq*, "Datakan ishyanutyun" hands, 2022, Yerevan, [*Prohibition against Retrial*, Yerevan] (in Armanian).

5. Margaryan A., Gabuzyan A., Simonyan T., *HH qreakan nor orensgrqum tegh gtac hayecakargayin motecumneri ev nor institutneri meknabanman uxecuyc*, 2022, Yerevan, [*A Guide to the Interpretation of Conceptual Approaches and New Institutions in the New RA Criminal Code*, Yerevan] (in Armenian).

6. Chernova Maya Borisovna. *Deyatelnoe raskayanie kak institut osvoboajdeniya ot ugalovnoy otvetstvennosti*, Sankt-Peterburg, 2006 [*Active Repentance as an Institution of Liberation from Criminal Responsibility*, Saint Petersburg] (in Russian).

7. Rubel R., Poghosyan V., *HH endhanur varchakan iravunq*, Yerevan, Bavigh, 2011 [*General Administrative Law of RA*, Yerevan] (in Armenian).

8. Vchrabek datarani 15.08.2014. V.Manasyani veraberyal gorcov ESHD/0144/01/13 voroshum [Court of Cassation decision /0144/01/13 on the Case of Vardan Manasyan on 15.08.2014.], Yerevan (in Armenian).

9. *Ugolovnoe pravo. Chast Obshyaya*: Sabanin S. H., Poghosyan T. Yu., drugie, 1995, Ekaterinburg [*Criminal Law. Common Part*: Yekaterinburg] (in Russian).

10. *Ugolovnoe pravo RF, Osobennaya chast*, Rarog A. I., Moskva, 2004 [*Criminal Law of RF, Special Part*, Moscow] (in Russian).

11. Qyaramyan A., Yeremyan H., "Gortsun zxjalu instituti qreairavakan ev qreadatavarakan verlutsutyun" Orinakanutyun handes, tiv 101 [A Criminological and Criminal Procedural Analysis of the Institute for Active Repentance, Yerevan] (in Armenian).

12. Sherba S. P., Savkin A. B., *Dokazivanie deyatelnovo raskayaniya podozrevayemovo(obvinyayemovo) na predvaritelnom sledstvii*, M., 1994, [*Proof of Active Remorse of the Suspect (accused) at the Preliminary Investigation*, Moscow] (in Russian).

SOME ISSUES OF EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY ON THE BASIS OF ACTIVE REPENTANCE

SHUSHAN HODABASHYAN

Yerevan Garrison Military Prosecutor's office, Prosecutor;

Yerevan State University, Faculty of Law,

Second-year master student,

Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to analyse some mechanisms of the institution of active repentance and offer approaches different from current legislation. One particular suggestion is to refuse the discretion and learn it as a tool of imperative authority to exempt one from criminal responsibility.

In this article the initial purpose of the institute of active repentance in the context of historical origins was analyzed, some subjective and objective factors of the institute of active repentance including sincere repentance, criterias for evaluating a first-time offense, possible solutions when real and ideal cohetions are applicable, material and criminal procedural aspects of the concept of crime, the connection of stimulatory norm of law with the institution of active repentance, changes in the relevant legal norms of the previous and current criminal and criminal procedure legislation, similarities and differences, as well as possible to balance the theoretical and practical functioning of the institution of active repentance in law practice were discussed.

Keywords: *Active repentance, exemption from criminal responsibility, the discretion, admission of guilt, first-time offense, real summation, ideal summation, stimulatory norm of law, crime, deed.*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ НА ОСНОВЕ ДЕЯТЕЛЬНОГО РАСКАЯНИЯ

ШУШАН ОДАБАШЯН

*прокурор в военной прокуратуре Ереванского гарнизона,
студентка второго курса магистратуры юридического факультета
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – проанализировать некоторые механизмы института деятельного раскаяния и предложить методы, отличающиеся от действующего законодательства. Одно из конкретных предложений – отказаться от дискреционных полномочий и изучать их как инструмент императивной власти для освобождения от уголовной ответственности.

В статье проанализировано изначальное назначение института деятельного раскаяния в контексте исторических источников, рассмотрены некоторые субъективные и объективные факторы института деятельного раскаяния, включая искреннее раскаяние, критерии оценки впервые совершенного преступления, возможные решения при применении реальных механизмов, материальные и уголовно-процессуальные аспекты понятия преступления, связь стимулирующей нормы закона с институтом деятельного раскаяния, изменения в соответствующих правовых нормах прежнего и нынешнего уголовного и уголовно-процессуального законодательства, сходства и различия, а также возможные варианты баланса теоретического и практического функционирования института деятельного раскаяния в юридической практике.

Ключевые слова: *Деятельное раскаяние, освободить от уголовной ответственности, дискреционные полномочия, явка с повинной, совершение преступления в первый раз, реальная совокупность, идеальная совокупность, поощрительная норма, преступление, поступок.*